

Տարեկան Տեղեկագիր Հովհաննիս

Ս.Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ

1967 Յունվ. 1- 1967 Դեկտ. 31

Սիրելի ծխականներ,

Աստուծոյ ողորմութեամբ տարի մը եւս բոլոր եցինք եկեղեցական մեր գործերուն կատարման մէջ:

Ս.ՊԱՏԱՐԱԳ.- Ամէն Կիրակի անխափան Ս.Պատարագ ունեցած ենք եկեղեցւոյս մէջ ի բաց

առեալ այն Կիրակիները որ համաժողովներու առթիւ բացակայած եմ քաղաքէն:

Պատարագ ունեցած ենք Ծննդեան եւ Զատկի ճրագալոյցներու առթիւ:Մեծ Պահոց շրջանին Հանգստեան եւ խաղաղական ժամերգութիւն եւ Արեւագալի արարողութիւն կատարած ենք:Քայլողած ենք թէ Հայերէն եւ թէ Անգլերէն լեզուներով:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Հետեւեալ խորհուրդները կատարած ենք 1967 շրջանին:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ.- 13, Պսակադրութիւններ 4, Թաղումներ 11:

Ասոնցմէ զատ մասնակցած ենք երկու պսակադրութեանց մէկը Ռէյսին Միւսը Ֆվուն-ըսթընի մէջ:

Երկու տարբեր առիթներով գերեզմանօրհնէք կատարած ենք ծխականներու փափառվով:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Զանազան առիթներով այցելած եմ ծխականներուս:

81 Հիւանդներու այցելած եւ աղօթած եմ:

24 ցաւակցական այցելութիւններ տուած, աղօթած եւ միսիթարած եմ ծխականներուն մահերու առթիւ:

Ծննդեան եւ Զատկի 97 տունօրհնէք կատարած եմ:

257 Հովուական այցելութիւններ տուած եմ ծխականներուս:

Ընդհանուր այցելութեանց գումարը եղած է 459:

ՃՈՂՈՎՆԵՐ.- Ներկայ գտնուած եմ Ծխական Խորհուրդի, Տիկնաց Միութեան, Երիտասարդ Տիկնաց Միութեան, Երիտասարդաց Կազմակերպութեան, եւ Կիրակնօրեայ Դպրոցի Ուսուցչական ժողովներու:

Ասոնցմէ զատ ներկայ գտնուած եմ Մայր Տաճարի Թանձնախումբի, Հեկավարներու պատրաստութեան Թանձնախումբի, Երշանային Եկեղեցականաց, Միջ-Արեւմտեան շրջանային Թանձնախումբի, Գոհար Գասպարեան Համերգի Թանձնախումբի, "Վերանորոգում ի Քրիստոս" շարժման, Սրբազն Առաջնորդի գլխաւորութեամբ, երջանիս Եկեղեցիներու Ծխական Խորհուրդներու եւ Երեսփոխաններու միացեալ ժողովներուն:

ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ.- Եկեղեցւոյս անունով մասնակցած եմ Թեմական Պատգամաւորական Համաժողովին, Տիթրոյթի մէջ: Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Համաժողովին Բավկալինկ նիւ Եորք: Այդ Կիրակի ես պատարագեցի Բավկալինկի մէջ:

"Վերանորոգում ի Քրիստոս" շաբթուան ընթացքին, այցելեցի Վոքիկըն եւ Սառւթ Միքվոքի եւ քարոզեցի: Ուրիշ առիթով դարձեալ Հրաւիրուեցայ Սառւթ Միլվոքի քարոզելու Համար: Հոկտ. 22ին նախիկն ծուխիս, նորթ Ֆիլատէլիքիոյ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի հրաւիրով եւ մեր պատուարժան Հոգաբարձութեան բարեհաճ հաւանութեամբ, Ֆիլատէլիքի գացի պատարագելու եւ քարոզելու համար, Նորաշարոյց եկեղեցւոյ առաջին տարեղարձին առթիւ:

ԶԵՂՈՒՄՆԵՐ.- Անցնող տարուան ընթացքին կազմակերպեցինք հետեւեալ ազգային եւ տօնական ~~ՀԱՅ~~ հանդիսութիւնները :

Վարդանանց Տօնակատարութիւն :

Ապրիլ եան նահատակաց Սգահանդէս :

Սահակ եան Քալէճի Օր :

Մայր Տաճարի Հանգանակութեան ճաշկերոյ յթ :

Եկեղեցւոյ յս Տարեդարձի Տօնակատարութիւն :

Կիրակնօրեայ Դպրոցի Ծննդեան հանդէսի պատրաստութիւն :

Յովհաննէս Սրբ. Գասպարեանի ողջերթի ճաշկերոյ յթի պատրաստութիւն :

Այս ձեռնարկներուն յայտագրի պատրաստութիւնը, բեմադրութիւնը եւ պէտք եղած պարագաներուն դիմա-ծպտումները կատարեցինք :

Ասոնցմէ զատ նաեւ մասնակցեցանք հետեւեալ համայնքային ձեռնարկներու :

Գառունսը լ ավ Զըրչըզի ժողոներուն :

~~Աստուածածին Համբարձութեան Տարեդարձի Տօնակատարութեան :~~

Վարդանանց Ասպետներու Վարդանանց Տօնակատարութեան :

Գոհար Գասպարեանի երգահանդէսին :

Բարեգործական Միութեան կազմակերպած շրջանաւարտներու ի պատիւ ճաշկերոյ յթին :

Լրաբերի Օր-ուան ճաշկերոյ յթին :

Սեբեստացիներու Համաժողովին եւ ճաշկերոյ յթին :

Հոշեցի-Գղեցիներու Ուսումնասիրացի ժողովին :

Միտ-Վէսթի Հայկական Քէմբին :

Թառաջդիմական Միութեան ճաշկերոյ յթին :

Տէր եւ Տիկ. Յակոբ Իբճեանի ամուսնութեան Տարեդարձի ճաշկերոյ յթին :

Դեմոկրատներու շրջանային յարգանքի ճաշկերոյ յթին :

Սեբաստացիներու հալօին բարթիին :

Հայաստանի անկախութեան տարեդարձի ճաշկերոյ յթին :

~~Հիւանդանութիւն Հովհաննես Ծիրացարք Ժիշացարք առաջազն-Ռիազն:~~

Միշտ սերկայ գտնուած եմ եկեղեցւոյ ձեռնարկներուն, ճաշկերոյ յթներուն,

Պազարին, Պարահանդէսներուն եւ Տիկնաց Միութեան ամսական ճաշ-ժողովներուն :

Դաշտահանդէսներուն :

ԱՅՑԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ.- Անցնող տարուան ընթացքին Եկեղեցիս այցելած են հետեւեալ Եկեղեցականներ :

Գեր. Տ. Թորգոմ Ս. Մանուկեան, Թեմիս Առաջնորդը :

Գեր. Տ. Տիրան Ս. Ներսոյ յեան :

Գեր. Տ. Գնել Ս. Թէրէնեան :

Հոգշ. Վարուժան Տ. Վրդ. Գապարաճեան :

,, Վրթանէս Վրդ. Գալայնեան :

,, Վահրիճ Աբեղայ Գազանճեան :

Արժ. Տ. Լեւոն Քհն. Առաքել եան

,, Տ. Գրիգոր Քհն. Հայրապետեան

,, Տ. Տաճար Քհն. Դաւիթ յեան

Բարշ. Յովհաննէս Սրբ. Գասպարեան

Աշխարհականներ.- Տեար Յարութիւն Կուժունի, Պր. Դաւիթ Աղամեան,

Օր. Լէնոր Թոլիկեան :

"ԼՈՒՍԱԽՈՐԻՉ".- Եկեղեցւոյ յս ամսօրեայ տեղեկատութեթեթիկը կանոնաւորաբար հրատարակեցինք երկլեզու, Անգլերէն եւ Հայերէն բովանդակութեամբ :

Տպագանակը 150էն բարձրացած է 280ի :

Է. Սի. Վայ. Օ. է. յ. - Երիտասարդաց Երեց եւ Կրտսէր խումբերը հակառակ իրենց սակաւաթիւ ըլլալուն ժրաշան կերպով կաշխատին իրենց ծրագիրներու իրագործման համար: Կազմակերպեցին պարահանդէսներ, շրջանային ժողովներ եւ դասախոսութիւններ: Դասախոսութիւններէն մէկը Ս. Պատարագի բացատրութիւնն էր նկարներով իմ կողմէ դասախոսուած: Աւելի ուշադրութեան եւ քաջալերանքի պէտք ունին մեր երիտասարդները:

ԴՊՐԱՑ ԴԱՍ. - Շատ ակնայտ է որ Դպրաց Դասը պէտք ունի կարող Դպրապետի մը: Դպրաց անդամներ ունինք սակայն կարող վարիչի մը չգոյութեան պատճառով պէտք եղած արդիւնքը ձեռք չբերուիր: Շատ գնահատելի է անոնց նուիրուած ծառայութիւնը եկեղեցւոյ երգեցողութեան մէջ:

ԿԻՐԱԿԽՈՐԵԱՑ ԴՊՐՈՑ. - Աշակերտութեան թիւը աւելցած է, սակայն բաւականաչափ ուսուցիչ եւ առանցին սենեակներու չգոյութիւնը կը դժուարացնէ ուսուցչական կազմին աշխատանքները: Տեսչուհին հրաժարման պատճառակ Կիրակնօրեայ Դպրոցի ղեկավարութիւնը եւ խնամակալութիւնը յանձնուած է ուսուցչական կազմին հովիւին գլխաւորութեամբ: Պէտք ունինք ուսուցիչներու մանաւանդ տեսուչի մը:

Ներկայ ուսուցիչներուն կատարած աշխատանքը վեր է ամէն գնահատանքէ:

ՀԱՅ ԴՊՐՈՑ. - Հոկտ.ի սկիզբը վերաբացուեցաւ դպրոցը մեր ջանքերով: Ապահովեցինք գործակցութիւնը Տիկ. Զէփիւր Եազընեանի որպէս Հայ Դպրոցի ուսուցիչ մեզ հետ սորվեցնելու հայերէն լեզուն մեր մանուկներուն, սակայն դժբախտաբար գործակցութիւն չենք գտներ ծնողներու կողմէ, որոնք այլեւայլ պատճառներով իրենց զաւակները դպրոց չեն բերեր: Ներկայ աշակերտներուն թիւը 10 է միայն:

ՏԻԿՆԱՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ. - Երեց եւ Երիտասարդ Տիկնաց զոյգ Միութիւններ ողնասիւներն են եկեղեցւոյ առանց անոնց շատ դժուար պիտի ըլլար մեր հոգեւոր տունը, եկեղեցին հաստատ եւ պայծառ պահել:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. - Ուրախ ենք որ Ծխական Խորհուրդի ներկայ անդամները նախկին Ծխական Խորհուրդի անդամներ ըլլալով փորձառութիւնը ունին գործին եւ մեր ժրաշան ատենապետին ճէ յք Մաթէոսեանի անձնուէր ղեկավարութեան տակ, ընթացիկ տարուան շրջանին արդիւնաշատ գործունէութիւն ցոյց տուին: Իրենց տեղեկագիրը լսեցիք եւ տեղեկացաք անոնց գործունէութեան:

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՈՐԾԵՐ. - Նամակագրութիւններ, յայտարարութիւններ, վկայագրեր եւ արձանագրութիւններ ժամանակին կատարուած եւ մասնաւոր տոմարներու մէջ պահուած են:

Այս բոլորը որոնք կատարուեցան դիւրութեամբ չեղան. յոգնեցանք, նեղուեցանք, հիւանդացանք բայց չյուսահատեցանք եւ Աստուծոյ օգնութեամբ եւ մեր բարեպաշտ ժողովուրդի գործակցութեամբ այսքան գործ կրցանք ընել: Դեռ ըլլալիք աշխատանքներ կան: Իրարհասկացողութեամբ եւ սիրով պիտի կատարենք բոլորը յառաջիկային: Պակասներ ունինք որոնք պիտի լրացնենք, սիսալներ ունինք որոնք պիտի շտկենք:

Եւ այս բոլորը պիտի ընենք Աստուծոյ փառքին եւ եկեղեցւոյ պայծառութեան համար: Կուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլոր վարչական մարմիններուն եւ մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին որոնք օգնեցին ինծի որպէսի ուսերուս վրայ դրուած հովուական ծանր պատասխանատուութեան բեռը թեթեւ եւ գործս դիւրին ըլլայ:

Աստուծոյ օրհնութիւնը ձեր բոլորին վրայ ըլլայ. Ճեզ եւ Ճեր սիրելիները պահէ պահապանէ եւ երկար առողջ կեանք պարգեւէ: